

Պ Ա Տ Ե Ր Ա Զ ՈՒ

Թնդանօթները կոկոզավիզ, կը դիտեն միակնոցով հորիզոնները փոթորուն և անդաստան կարգալով կը տատանին:

Կը փայլատակէ բացխփիկ լոյս մը, որոտումը սնոր կը հետեւի, հրէշաթեւ ոււմը կը սաւառնի ատեւավար:

Պայթիւնը կը լռեցնէ պահ մը ամէն ձայն:

Կը ցնցուի երկիրը տենդահար, Հողը կը ճեղքուի, քայքայուած մարմիններ կը նետուին, զատուած գլուխ մը հընդկընկոյզի պէս կ'իյնայ, կը ժայթքի ուղեղը մահասփիւռ գործիններն յղացող, նմաններուն դէմքն ի վեր:

Ջախջախ թևեր, սրուններ, կոճղերու պէս կիսալյութաց ցցուած են դուրս դարանակալ խրամներէն, ու վերաւորներու կանչերն ողիկ ողիկ կը ծփան հողին վրայ:



Յետոյ, մարտակոչ փողերն, բարձրադաղակ կը ժողվեն մեռելները կրկին, նորանոր մահացումներու անծանօթ:

Հրացանը թոթով կը լռէ, կը խոյանայ գերազըր, զրոուած մարտիկներուն կաղկանծիւնը, շաշիւնը սուրն, ներուն կարճ ու կտրուկ՝ հնչիւնն ունի կոտրող պողպատի:

Հրթիռներ կը բարձրանան, և թաթար մը դիւայիտ կազի՝ կը խուժէ մեռելները անհետ թաղելու:

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂԱ

Կղուճա կրծելով՝ խրամին անկիւնը կը տարա-
ծուիմ հողին վրայ:

Օհօ, ոունգերուս փայփայտիլը կը զգամ խա-
ւիժին հոտէն, յետոյ կարծես փափկութիւնը անկողինն
կը թաղէ զիս, և կ'անհանգստացնեն այցի եկող պատ-
կերները սիրունիներուս:

Սնցեալը, հը, հոտած հաւկիթ մըն էր, չէ...



Կ'ընդմիջէ բոմբիւնը թնդանօթներուն: Վայնասիւն
մը սպառսպիւռ կը վազէ, կը փլի երկինքը մեծաշա-
ռաչ, և ցաւագարի պէս կը տապալտկի հողը: Դժոխքին
դուռը կրկին քացուեցաւ չարաշուք կարմիրը կը լուսա-
ւորէ ապտտանարանս:

Մայր, այս հեղուանը ես գիտեմ, Ս. Սարգիսին
կառքը չէ որ կը վազէ սանձարձակ, այրած վառօդի
ծուխով լեցուն է միջոցը:

Է՛հ, խանձած զինուոր, երգէ սիրատարփիկ հէ-
քեաթներ:



Անգղերու կարաւաններ, ուհո՛ւ, ուհո՛ւ, կանչերով
կ'իջնեն դաշտերուն վրայ հանդարտած:

Կախուած են անոնց կտուցներէն արինակաթ
պատառներ ընկերներէս:

Երիտասարդ, կը մտածէիր ապագային վրայ,
հա՛, հա՛, հա՛, հա՛...

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ